

վերջացնեն այն դաշինները, որոնց համար ես եկել եմ այստեղ՝ իսկոյն ճանապարհ կ'ընկնենք, ասաց դեսպանը: Իսկ եթէ չեղաւ, այն ժամանակ դո՛ւ, Հնչի, յանձն կ'առնես իմ խմբի գլխաւոր մասի հետ գնալ, ես կը բաւականանամ իմ երկու սորովներով, և երբ դործս կը վերջանայ՝ շաւիարի ²⁾ կը գամ:

Այս՝ Պարսկաստանի «առաջին շունչն ³⁾» էր, որ մեզ հասաւ մեր իշխանաւորից, և մեք շատ ուրախացանք: Ճիշտ է իմ պաշտպանը—մեծ վէզիրը մեռել էր, բայց ես մեծ յոյս ունէի վայելելու Շահի շնորհը: Ես մի լեզու ունէի որ (բացի դեսպանինը) կարող եմ ասել՝ անմահ էր և հետևապէս շատ յոյսեր ունէի որ պիտի իրագործուէին լեզուիս շնորհիւ:

Դ. Գ.

Դեսպանը ցոյց է տալիս մի քանի իսկական պարսկական զգացումներ կանանց վերաբերմամբ:—Պարսկաստան վերադառնալու պատրաստութիւններ:

Միրզա Ֆիրուզը թէև մտածել էր իր ծառաների գլխաւոր մասը հայրենիք վերադարձնել, բայց չէր հասկանում ինչպէս բաժանուել նրանցից. որովհետև չերբեզուհու՛ն ուղարկելը դժուարացում էր բանը: Նա միակ կիներ էր մէջ մէջ... և բացի դրանից, նրա նմանը, որքան կարողացանք ստուգել՝ գեռ չէր բերուել Անգլիա:

Դեսպանը կարծում էր որ ինքը շատ վատ անուն կը թողնէր, եթէ թոյլ տար որ չերբեզուհին ճանապարհորդութիւն անէր առանց իր տիրոջ պաշտպանութեան: Գուցէ նա բաւական հաւատ չէր ընծայում ինձ, որ նրան յանձնէր իմ խնամակալութեանը, և միևնոյն ժամանակ մտածում էր որ եթէ իր երկու հաւատարիմ սորովներին—Սէիդին և Մահրուբին նրա հետ ուղարկէր՝ այն ժամանակ իր դործը շատ կը դժուարանար:

Մինչև այդ օրը նա ամենևին առիթ չէր ունեցել չերբեզուհուց դժգոհելու, որն իր վարք ու բարքով ապացուցել էր որ, ինքը մահմէդական կնոջ տիպարն է: Նա երբէք դուրս չէր գնացել տանից. ո՛չ թէ տանից այլ մինչև իսկ այն սենեակից՝

²⁾ Չափար—սուրհանդակ: Կը վերադառնամ որպէս սուրհանդակ:

³⁾ Սա դուռ պարսկական ոճ է, նման Ֆրանսիական le premier souper-

ուր առաջին օրը նա մտել էր և փակուելու նա շարունակել էր կերակուր ուտել մատներով և միշտ լուացել էր իր ձեռքերը: Միշտ ժամանակին աղօթել էր, և օրուայ ընթացքում զբաղուել էր նորոգելով և պատրաստելով դեսպանի շորերը՝ որպէս մի լաւ ստրկունի:

Սակայն մի հանգամանք պատահեց որ՝ մի կողմից աւելացրեց այն թշուառութիւնները որ մեր իշխանաւորն արդէն կրել էր, միևնոյն ժամանակ օգնեց նրան իր միտքը վերջացնելու չեղքեղունու գնալու մասին:

Անգլիայում քաղաքների տները շինուած են անյալիսի ձևով՝ որ հի մի մանմեղական չէ կարող առանց բաւական մեծ դժուարութեան փակել իր կանանց սենեակները այնպէս՝ որ հի ոք չկարողանայ տեսնել նրանց: Բացի այն տներից՝ որոնք մէյդաններ (հրապարակներ) ունեն իրանց առաջ, բոլոր տների մէջ կարելի է նայել, և քանի որ նրանք ընդհանրապէս միաձև տներ են, հետաքրքիր մարդը կարող է իսկոյն իմոնալ թէ ուր կողմը պիտի նայի՝ կանանց տեսնելու համար:

Մեր չեղքեղունու սենեակի պատուհանները բացուած էին ան տների պատուհանների կարգում, որոնք մի ուղիղ անկիւն էին կաղնու ղեսպանի տան հետ, և երբ մենք առաջին օրը հասանք, տեսանք որ բաղձաթիւ անհաւատներ իրանց աչքերը յառել էին նրա պատուհանների վրայ և դիտում էին. եթէ այդ օրը մենք կարողանայինք նրանցից մէկն ու մէկին բռնել, տեղն ու տեղը կը հասկացնէինք թէ ինչ է նշանակում ուրիշի հարեմի մէջ նայելը: Մենք մի այնպիսի դաս կը տայինք նրան, որ նա այլ ևս չհամարձակուէր մի քայլ փոխել առանց յիշելու իր յանդգնութիւնն ու կրած պատիժը:

Մի գիշեր դեսպանը սովորականից շատ աւելի շուտ վերադարձաւ մի անգլիական հանդէսից, որտեղ նա հրաւիրուած էր: Նրա դէմքից իսկոյն յայտնուեց որ նա սաստիկ զայրացած էր: Կառքից իջաւ և տունը մտաւ թէ չէ՝ նա գոռաց.

— Ո՞ւր է Սէիդը, ո՞ւր է Մահմուդը:

Նրանք եկան շնչասպառ, թէ և կէս քնած կէս արթուն:

— Ո՞ւր է ի՞նչ դուք հարաւսնողաներ, սրիկաներ, գոռաց նա:

— Քնած էինք, ասացին ստրուկները:

— Դէլֆարիբն ո՞ւր է:

— Քնած է, պատասխանեց Մահմուդը:

— Այդ դժուրմաղ, այս ինչքոր եմ լսում, դուք ինչո՞ւ նրան խաղտեցիք այսօր:

— Խողտեցինք նրան, բացականչեցին ստրուկները, ոչ աղա մենք այդպէս չենք արել։

— Երդուում եմ այս մօրուքով, տեսնում էք (ցոյց տալով իր մօրուքը), երդուում եմ որ եթէ դուք սուտ խօսէք՝ երկուսիդ կաշին տիկ կը հանեմ։ Անհաւատներն երբէք սուտ չեն խօսում։ Նրանցից մէկը մի քանի ըոպէ առաջ ինձ ասաց որ այս առաւօտ պատուհանից տեսել են ձեզ չերքեզուհու աջ ու ձախ կողմին նստած՝ խողտում էք եղել նրան։

— Շուտ ասացէք, ճիշտ է այդ բանը թէ չէ, ասացէք իսկոյն, քանի դեռ լեզուներդ չեմ կտրել։

Ստրուկներն սկսեցին շուարել իրար երեսի, և յետոյ Մահմուդը պատասխանեց.

— Աղն, թոյլ տուէք ինձ աղաչել որ, սուտ չէ, մենք խողտեցինք նրան, բայց ձեզ մի բարի ծառայութիւն անելու նպատակով էր՝ որ համարձակուեցինք այդ բանն անել։

— Ինչպէս։

— Չերքեզուհին այս առաւօտ շատ տրտում էր. նա շատ ացել էր. նա ձանձ Լացել էր իր սենեակից և կեանքից. մենք չաբան ասացինք, բայց ոչ մի խօսքով չկարողացանք հանգստացնել նրան։ Ծարահատուած՝ մենք նրան պատուհանի մօտ քաշեցինք և սկսեցինք խողտել նրան։

— Այ խելագարներ, ասաց դեսպանը, ով է մինչև հիմա այդպէս բան արել։ Միթէ ես ձեզ հազար անգամ չեմ ասել որ նրան ոչ մի անհաւատ չպիտի տեսնի։ Ինչո՞ւ դուք չէք լսում խօսքս. ինչո՞ւ չէք կատարում հրամանս։

— Մենք ֆլասակար բան չենք արել, ասաց Սէիդը։ Այն ժամանակ ոչ մի անհաւատ չէր երևում և օդը նրան շատ նպաստեց։

— Եթէ օդը նրան նպաստեց, ապա էլ ինչո՞ւ դուք խողտելը նրան։

— Նրան հարկաւոր էր մի քիչ շարժուել, նրան մարմնամարդութիւն էր հարկաւոր։

— Ես կը մեռնեմ եթէ ձեր ձեռքում աւելի երկար կը մնամ, ասաց դեսպանը։ Դուք ինձ սպանեցիք։ Մոհամէդ բէգի այն յանդէսութիւնը, Սէիդի և Թաղիի լողանալը բոլոր ֆրանկների առաջ, չերքեզուհու խողտուիլը— դրանք բոլորն էլ սաստիկ դաժնացրել են սիրտս։ Ես նրան միւս ծառաների հետ Պարսկաստան կ'ուղարկեմ, էլ ճար չկայ, կ'ուղարկեմ և կ'ազատուեմ։ Գնացէք, գնացէք, ասաց նա և արձակեց յանցաւորներին ինչպէս և միւս ծառաներին։

Հետևեալ առաւօտը կրկին առաջ եկաւ մեր Պարսկաստան

վերադառնալու խնդիրը, և որովհետև դեսպանն արդէն վճռել էր որ չերքեզուհին էլ գնար, ուստի մենք այլևս ուշանալու հչինչ պատճառ չունէինք: Մենք հետևապէս սկսեցինք պատրաստութիւններ տեսնել, և ամբողջ տան մէջ ընկաւ մի ընդհանուր շարժում: Մենք իսկոյն դուրս բերինք մեր ձիերի թամբերը, սանձերն և այլ պարագաներն, ու կապեցինք շորերի մէջ: Մենք վերցրինք երկւոր ժամանակ մի անկիւնում կախուած մեր հրացանները, մաքրեցինք՝ և պատրաստեցինք գործածութեան համար: Եւ ամեն բան շուտով սկսեց մեր մէջ պարսկական ընաւորութիւն ստանալ:

Ինչպէս որ մեր Շահը վճարել էր մեր իրկիրը դնացող դեսպանների ծախքերի մի մասը, նոյնպէս էլ անգլիական կառավարութիւնը վճարեց մեր դեսպանի արած ծախքերի մի մասը, բայց շատ պարտքեր կային, որ դեսպանն ինքը պիտի վճարէր, և նա վճռեց մեր հեռանալուց առաջ հաշիւ անել և ստուգել այդ պարտքերի գումարը:

Ալլահ, Ալլահ, երբ քաղաքում լուր տարածուեց որ մենք վերադառնալու ենք, մեր տունը խուժեցին իւրաքանչիւրը իր ձեռքում մի-մի կտոր թուղթ բռնած այնքան մարդիկ ու կանայք՝ որ մենք ապշեցինք: Այդ թղթի կտորներից ամեն մի հատը որոշ արժէք ունէր, և դեսպանը պիտի վճարէր իւրաքանչիւրի արժէքը:

Մինչև այդ ժամանակ, ճիշտ է, դեսպանը շատ ձեռնամուխ չէր եղել այն մի քանի քսակ թումանների, որ ինքն իր հետ բերել էր Պարսկաստանից. բայց երբ նա ստուգեց իր պարտքերի համագումարը, սկսեց գլուխն ու ձեռքը շարժել և մտաւ մի անկիւն մտածելու իր թումանների համար:

Եթէ մենք Պարսկաստանում լինէինք, դժուարութիւնը շուտ կը վերջանար, որովհետև եթէ այնտեղ միջոց չունենայինք կամ եթէ չկամենայինք մեր պարտքը վճարել, հեշտութեամբ կարող կը լինէինք մեր պարտատիրոջը «այսօր գնա, վաղն արի» ասել, խոստանալով նրան իր փողը վճարել կամ ցորենով կամ ծխախոտով կամ ծայրայեղ դէպքում՝ նազդով—այսինքն ֆալախկայով, և այդպէս բանը շուտ կը վերանար: Բայց Անգլիայում այդպէս բան չէինք կարող անել, որովհետև երբ մենք մի անգամ սկսեցինք վիճել այդ թղթի կտորներով արտաքոյ կարգի պահանջ անողների հետ, չափաւորութիւն առաջարկելով նրանց՝ նրանք իսկոյն սպառնացին որ եթէ չվճարէինք՝ իրանք կը հարկադրուէին դիմել դատարանին:

Պահանջներից մէկը մենք այնքան անիրաւացի գտանք, որ իսկոյն դիմեցինք մէհմանդարին բացատրութիւն տալու և

մեզ պաշտպանելու համար: Այդ պահանջն անում էր մի ներկաբար, որը ներկել էր այն սպիտակ ձին, որ դեռ պանը ընծայել էր Անգլիայի թագաւորին:

Այդ մարդը բացի նրանից որ հաշուէլ էր իր գործած ներկի իւղի, վրձինների և շատ ուրիշ նիւթերի գինը՝ մի մեծ գումար էլ պահանջում էր «անձնական վախ» համար:

— Այս ի՞նչ խաբար է, ի՞նչ է ասում այդ մարդը, ասաց դեսպանը մէհմանդարին: Այդ մարդը աւելի առաջ է գնացել քան տաճիկները, որոնք իրանց երկրում ճանապարհորդութիւն անելիս՝ խեղճ ռայեաթներից «ատամի փող» են պահանջում այն իրաւունքով՝ որ իրանք նեղութիւն են կրում և ուտում նրանց հաւերը, պտուղները և ուրիշ բաներ որ իրանք բռնում առնում են խեղճերից: Այդ հաշուով, երբ մի ատամնաբոյժ ատամս հանում է, ես էլ կարող եմ նրան վճարուելիք վարձի մի մասը պակսեցնել ասելով որ ես էլ «անձնական վախ» ունեցայ:

Մէհմանդարը հետաքրքրուեց այս արտակարգ պահանջի մասին և ներկաբարի տուած բացատրութիւնից՝ բանից դուրս եկաւ որ, երբ նա յանձն էր առել ձին ներկելը, գործել էր նրա վրայ այնպէս՝ ինչպէս պիտի դործէր մի տան վրայ, «բայց յետոյ» ասում էր նա, «տունն ինձ քցացի չէ դաբնում, այն ինչ դեսպանի ձին զարկեց, և Ալլահը իր ողորմութեամբ փրկեց ինձ, եթէ ոչ գլուխս կը ջախջախէր: Անշուշտ դա մի հանգամանք է որ պիտի ինկատի ունենալ»:

Չնայած որ այդ պատճառաբանութիւնն ու այդ պահանջը շատ տարօրինակ թուաց մեզ, այնուամենայնիւ մենք պարտաւորուեցինք վճարել, և յետոյ, մենք տեսանք որ այդպիսի մի թղթի կտորով զինուած մի անհաւատ, այնքան սոսկալի էր՝ որքան լինում է մեր երկրում կայսերական ֆիրմանով զինուած մի հաւատացեալ: Երկուսով էլ բացարձակ իշխաններ են:

Գլ. Ժա.

Սափրիչ Ֆէրէյդունը խաթաբալայի մէջ է ընկնում: Մի անգլիացի ռահար¹ հարկ է պահանջում:

Այն յարձակումների վրայ, որ մարդիկ իրանց հաշուետու-

¹) Ճանապարհապահ, ճանապարհի վրայ հսկիչ, ծ. թ.

սներով գործեցին մեզ վրայ, մեր հրաժեշտի ըոպէին աւելացաւ
և՛ մի ընդհանուր երկիւղ: Նոյն չորս աստղը որ մեր՝ իդմի-
րից հեռանալու ժամանակ իշխել էր մեր վրայ՝ կարծես թէ
վճռել էր Անգլիայում էլ իշխելու:

Այն ժամանակ երբ բոլորս պատրաստուել էինք մեկնելու,
և դեսպանը զգրադուած էր վիճելով մի սնդուկ շինողի հետ,
որը մեզ համար մի զոյգ նախօրէին ¹⁾ շինելու համար պահան-
ջում էր այնքան փող, որով Պարսկաստանում կարելի կը լինէր
մի տուն շինել՝ մի պառաւ և ողորմելի անհաւատ տղամարդ և
մի տգեղ կերպարանքով կին յօտեցան մեզ առաջնորդութեամբ
մի կեղտոտ ու սև զգեստով միջնորդի: Բանից դուրս եկաւ որ
նրանք եկել էին դեսպանին գանգանդատուելու Ֆէրէյդունի գէմ
որը դրժելով իր խոստումը չէր ամուսնացել յիշեալ կնոջ հետ:

Ֆէրէյդունը շատ խելացի, աչալուրջ և գործունեայ երի-
տասարդ էր: Նա երբէք պարապ չէր մնում. միշտ զբաղուած էր
մի գործով: Նա համարեա երբէք ժամանակ չէր ունենում իր
թէսերին գծելու, ինչպէս միւս ծառաները անում էին պարապ-
մունքի պակասութեան պատճառով: Նա մեղանից աւելի շուտ
և շատ էր սովորել անգլիերէն լեզուն ու աւելի վարժ էր խօ-
սում: Այդ պատճառով նա բոլորիցս աւելի, շատ աւելի ընծաներ
էր ստանում տեղացիներից: Պառաւ անհատը, որ եկել էր բո-
ղոքելու նրա գէմ օճառ եփող էր: Նա մի նոր տեսակ օճառ էր
գիւտ արել և երբ լսել էր որ պարսից դեսպանը Անգլիա էր
հասել, եկել էր նրա մօտ և իր գիւտի համար անուն շահելու
դիտաւարութեամբ՝ խնդրել էր նրան որ մի սուտ ասէր, այսին-
քէն ասէր որ իբր թէ ինքը՝ օճառ եփողը «օճառների հայրն է»:

Դեսպանը կարծելով որ դուցէ ֆրանկների՝ ուրիշին յար-
գելու ձևերից մէկն էլ այդ է, և մնաս չտեսնելով դրա մէջ՝ հրա-
մայել էր Ֆէրէյդունին (որովհետև օճառը և այդպիսի բաները
նրա ձեռքում էին) գնալ և իր կողմից ստել հարկաւոր եղած
սուտը կեղծելով որ իբր թէ բոլոր պարսիկների նախահայրերը
այդ նորագիւտ օճառն են գործածելիս եղել իրանց կենդանու-
թեան ժամանակ:

Ֆէրէյդունը, որ կարող էր լաւ խաղ խաղալ ուրիշի մօրու-
քի տակ, շուտով բարեկամացել էր օճառ եփողի հետ. նրան
յաջողուէլ էր ամենից առաջ իւրացնել մեծ քանակութեամբ
օճառ. յետոյ քանի որ իր նոր բարեկամը ծանօթ էր եղել շատ
անգլիացի սափրիչների հետ, ինքն էլ նրա միջոցով բարեկա-

¹⁾ Բառական Թարգմանութեամբ՝ սառցաման: Երեսը կաշի ջաշած
հանապարհորդութեան սնդուկ:

մացել էր նրանց հետ և հետզհետէ նրանցից ստացել և կազմել էր ածելիների, մկրատների, դանակների և ածելի սրող կաշիների մի ահագին ժողովածու:

Ֆէրէյդունը իրեն փոխադրութիւն՝ նրանց սովորեցրել էր մեր ձևով մաղ ներկելը—մի արհեստ՝ որի մէջ նրանք խոստովանուել էին որ մենք գերազանցել էինք: Նա նրանց սովորեցրել էր նաև դաստամալի¹⁾ արհեստը:

Ֆէրէյդունին՝ իր խելքի ու արուեստի համար՝ նրանք այնքան սիրել էին որ համոզել էին իրան համար մի առանձին խանութ բաց անել, ցոյց տալ իր առևտուրը և ապրել անկախաբար և եթէ՛նա չվախենար դեսպանից գուցէ կը կատարուէր նրանց ցանկութիւնը:

Վերջապէս ի՞նչ էր կարող անել նրա հանգամանքների տակ գտնուող մի ճշմարիտ հաւատացեալ: Նա սիրահարուել էր (գոնէ՛ օճառ եփողը այդպէս էր ասում) և զո՛հը իր աղջիկն էր եղել...

Սկզբում մենք այդպէս հասկացանք բողոքողի դատի հանգամանքները, բայց կեղտոտ և սև շորերով կարճիկ մարդը այնպիսի բաներ պատմեց Ֆէրէյդունի և մերոնց վառք ու բարբի մասին որ մենք բոլորովին ապշեցինք: Նա իր բողոքը ամփոփեց՝ բացարձակ կերպով ասելով՝ որ Ֆէրէյդունի խոստման վրայ վստահելով՝ օճառ եփողի աղջիկը կորցրել էր պատիւը, որ նա այլևս յոյս չունէր ամուսնանալու և որ նրա պատճառով նրանից հրաժարուել էին շատ ուրիշ լաւ սպիւրիչներ, որոնք նրան այնքան սիրելիս էին եղել որ մինչև անգամ պատրաստ էին եղել փախցնել նրան, եթէ՛ նա չղիջանէր ամուսնանալ իրանց հետ:

Այս բոլոր ֆլասի համար նա պահանջեց երկու հազար թուման:

—Մորուքս վկայ, բացականչեց դեսպանը, հազար թումանի անունը լսելով,—մօրուքս վկայ որ այս ամենից վատ բան է: Այս անհաւատներն սուելի մեծ կեղեքիչներ են՝ քան նրանք որ կան մեր երկրում:

Յետոյ դանալով Ֆէրէյդունին՝ ասաց.

—Այ դու փէղարսագ²⁾ սափրիչ, այս ի՞նչ եմ լսում, քեզ ձով ասաց որ փողոցներն ընկնես ու խոստումներ անես:

—Ի՞նչ խոստումներ, ի՞նչ ամուսնութիւն, ասաց Ֆէրէյդունը զարմացած: Ծիշոտ է, մի օր ես դիմեցի այս կնոջը, որը, ինչպէս տեսնում էք՝ ամենապառաւ մոթու նման է, և հարց-

1) Մարմինը ձեռքով շփել և յօդերը արխկանցնել: 2) Հալըդ շուն:

րի թէ արդեօք ինքը կը յոժմրուէր երկու ամսով ինձ կնու-
թիւն անել—մի բան, ո՞վ աղա, որ մեր երկրում սովորաբար
անում են օտարականները. բայց ես երբէք չէի կարծում որ
այսօր պիտի դատապարտուէի և ինձանից երկու հազար թուման
փող պահանջուէր: Վալլան, բիլլան, ես ոչինչ խոստում չեմ
արել: Ես միայն սրանից՝ այս կնոջից խնդրեցի որ ինձ հետ
երկու ամսով ամուսնանար որպէս մօթի, և անձ, տեսէք ի՞նչ
է պատահել, ի՞նչ գանգատ են անում ինձ դէմ:

Երբ Ֆէրէյդունն իր խօսքը վերջացրեց, գանգատաւոր-
ները սկսեցին երեքով խօսել և աղմկել: Աղմուկը այնպէս
սաստկացաւ որ, եթէ մէհմանդարը շուտով օգնութեան չհաս-
նէր, մենք գուցէ կը վարուէինք նրանց հետ պարսկական ձևով.
այսինքն նրանց ոտները կը բարձրացնէինք...

Երբ բողոքողները տեսան որ իրանց հայրենակիցներէից
մէկը մէջ տեղ ընկաւ մեզ պաշտպանելու համար, ձայները
կտրեցին, և սև շորերով կարճիկ մարդը սկսեց Ժպիտնի
ցոյց տալ իր երեսի վրայ և նայել եղանակին¹⁾

Մէհմանդարը նրանց ճանապարհ դրեց այնքան հեշտու-
թեամբ՝ ինչպէս Պարսկաստանում մի մեծ աղա արձակում է
իր ստորադրեալին. և այդ անելուց յետոյ, նա յայտնեց դես-
պանին որ նրանց արած զրպարտութիւնն այնքան յայտնի և
զգալի էր՝ որ չէր կարելի մի ըտպէ պաշտպանել նրանց:

Երբ սև շորերով մարդը, որը մի չարասէր մուլան էր և
որին ֆրանկները «attorney» էին կոչում, տեսաւ որ եթէ աւե-
լի պնդէր ինքը նեղութեան մէջ կ'ընկնէր՝ (այսինքն ճիպոտ-
ների հարուած կը ստանար իր ոտներին) խոհեմութիւն համա-
րեց առանց ձայն հանելու հեռանալ, գնալ:

—Բայց, ասաց դեսպանը, յանձն Ալլանի, ասացէք,
միթէ ձեր երկրում արդարութիւն չկայ. միթէ այստեղ ամեն
մի սրիկայ որ ամուսնացնելու մի պառաւած, զգուելի աղջիկ
ունի՝ իրաւունք ունի փող պահանջելու անմեղ պարսիկներից,
այն էլ ի՞նչ ձևով—այնպէս՝ որպէս՝ թէ ինքը թագաւորի դա-
հիճներէից մէկն է:

—Մեր երկրում ամուսնական խոստման դրժումը շատ
լուրջ բան է համարում, ասաց մէհմանդարը: Մեր օրէնքը
պաշտպանում է կանանց, ձերի պէս չէ:

—Մահմեդական երկրում, մի կին շատ քանջ պիտի լինի
որ կարողանայ օրէնքով ստիպել մի տղամարդի՝ որ ամուս-

1) Կամ ինչպէս անգլիացիներս ենք ասում՝ «նայել տեսնելու թէ
քամին ո՞ր կողմից է փչում:

նանայ իր հետ, ասաց Մոհամեդ բէգը, որ կանգնած էր մեզ մօտ: Բաւական է որ մեր կինը մի անգամ մտնի մէկի հարեմը. նրա ամուսինը նրա միակ տէրն ու իշխանն է դառնում, և յետոյ նա մինչև իր կեանքի վերջը այնտեղ ծեծ է ուտում, և տառապում է:

Վերջապէս Ֆէրէյդունի խնդիրը վերջանալուց յետոյ, մենք կրկին սկսեցինք վիճել սնդուկ շինողի հետ, որը իր պահանջած գումարից մի սև փող չէր կամենում զեղջել: Նրան երկրորդեցին մի խումբ անհաւատ դերձակներ, կօշկակարներ, և ուրիշ մանր վաճառականներ, որոնք բոլորն էլ իրանց ձեռքում ունեցած թղթի կտորների վրայ գրուածները՝ անհերքելի ճշմարտութիւններ էին համարում—ճշմարտութիւններ՝ որ կարծես թէ հաստատուած և անփոփոխելի էին որպէս մեր օրհնեալ Մարգարէի Ղորանի վճիռները:

Վերջապէս մեհմանդարը մեզ օգնեց: Շահերի և նրանց ներկայացուցիչների մասին՝ նա նրանց մի քանի բացատրութիւններ տուեց, որով, ըստ երևոյթին, նրանց կատաղութիւնն իշաւ և նրանք չափաւորեցին իրանց պահանջները: Յետոյ մենք վրձարեցինք և նրանք հեռացան առանց աւելորդ խօսք ասելու:

Բայց նրանցից մէկը մնաց անողոքելի. այդ մարդը հէնց առաջին օրից, ինչ մենք Անգլիա էինք հասել, մեզ շարունակ նեղացրել չարչարել էր: Նա մի հաստալիզ, անամօթ անհաւատ էր՝ ամենաւտորին դասակարգից: Նրա երեսը կարմիր էր, աչքերը տրաքելու չափ ուռած, շորերը թաւամազ՝ ինչպէս վրացիական եսփուշին և երկու կտորի բաժանուած մի զոգնոց մէջքին կապած:

Նրա պահանջը մեզ բոլորովին անհասկանալի էր: Նա ասում էր որ իբր թէ այս ինչ ճանապարհի վրայ մի դարվազայ *) կայ, որի մօտ ինքը առաւօտից մինչև երեկոյ մնում էր և որ այն օրից՝ ինչ մենք Անգլիա էինք հասել, դեսպանի ձիերը ամեն օր անցել էին այդ դարվազայից առանց մի սև փող հարկ վճարելու:

Մենք աշխատեցինք ստուգել թէ արդեօք նա Անգլիայի Շահի ծառաներից մէկն էր, որ այդքան յամառ էր իր պահանջի մէջ, որովհետև մեզ թուաց թէ նա ռահդար էր:

Նա ասաց որ ինքը թագաւորի ծառան չէր, բայց խօսեց մի ուրիշ իշխանութեան մասին՝ որ կոչւում էր «trustee», և որը ինչպէս երևում էր, նրա աչքում աւելի բարձր էր քան Շահի իշխանութիւնը. որովհետև նա շարունակ կրկնում էր թէ

*) Մեծ դուռ Մ. Թ.

«trustee»-ները 1) այս են հրամայել, թէ «trustee»-ները այն են հրամայել:

Իվերջոյ դեսպանը յուսահատութեամբ որոտաց.

—Մենք Գէորգ Շահից զատ ուրիշ ոչ մի թագաւոր չենք ճանաչում այստեղ. մենք դեռ ոչինչ չենք լսել քո trustee Շահի մասին, ուստի ի սէր Ալլահի, զնա գործիդ. Ճանապարհները բաց են բոլոր դեսպանների համար, դա ամենահին և ընդունուած կանոններից մէկն է, որ կայ ազգերի մէջ: Դեսպանների անձը սուրբ է, նրանց ճանապարհին ոչ մի արգելք չպիտի լինի:

Մարդը դարձեալ շարունակեց խօսել իր trustee-ների մասին, որոնք, ինչպէս մինք տեսանք, չէին կարող մեծ անձնաւորութիւններ լինել, քանի որ այդ մարդու պէս մի ողորմելի մարդն էր նրանց խազրնադարը (գանձապահ), որովհետեւ նա մեզ հաւատեցրեց, որ եթէ մենք չվճարէինք իր պահանջած փողը՝ այն ժամանակ ինքն իր գրպանից պիտի տար:

Դեսպանը հարցնելով ախոռապետից և իմանալով որ այդպիսի մի դարմազայ իսկապէս կար մեր տան և ախոռի միջոցով ընկած, և որ մեր ձիերը միշտ անցել էին այդ տանից առանց վճար տալու, սկսեց վախենալ և մտածել, որ գուցէ մի բան պիտի պատահէր, որ երկու տէրութիւնների մէջ խռովութիւն ձգէր:

—Եթէ մենք չզգուշանանք, մեր մէջ բառուների կռիւ կը ծագի, առաց նա:

Եւ շատ խորհրդածութիւնից յետոյ նա վճռեց, այդ բանը յանձնել մէհմանդարին, որ վերջ տար: Նա էլ իսկոյն պարզեց ամեն բան, բացառելով մեզ, որ այդ մարդը դահդար չէ, այլ մէկը, որ ճանապարհի վրայ հսկում էր կարգ պահելու համար. և նա իսկոյն յանձն առաւ բաւարարութիւն տալու նրան:

Այս բարի միջամտութեամբ՝ մենք վերջապէս ազատուցինք շատ դժուարութիւններից և ամեն բան վերջացրինք: Մեզ մնաց միայն սկսել մեր ճանապարհորդութիւնը և յոյսներս դնել Ալլահի վրայ:

Գլ. ԺԲ.

Հաջի Բաբան հրաժեշտի այց է անում Հոգերին: Նա ներկայանում է մի անդլիական հարսանիքում:

1) Աւանդապահ պաշտօնեայ:

Մեզ Պոլիս տանող նաւը պատրաստ էր. մենք կապեցինք մեր շորերը և անհամբեր էինք մեկնելու. բայց առաջ քան ինձ կրկին Ալլահի պահպանութեան յանձնելը և նաւ մտնելը, ես վճռեցի մի անգամ ևս այցելել լուսններս Բէսիին. (թէ և Հոգիւրը ինձ հետ այնպէս էին վարուել, որ ես ստիպուել էի նրանց «Խոդա հավէդ» ասել) և ներողութիւն խնդրել նրանից գործածա յանցանքի համար:

Անգլիայի թագաւորը մեզ հրաժեշտի ընծաներ էր տուել, և քանի որ ես այժմ հարիւր թումանից աւելի փողի տէր էի, ինձ համար պատրաստել տուի զգեստի զանազան պարագաներ անքան վայելուչ որ ես պարծանքով մտածեցի որ «Միր-զա» բառը այժմ կարելի էր գրել իմ՝ անուան առաջ փոխանակ վերջը: Ես արդէն այնպիսի շահագոյայական կերպարանք ունէի, որ եթէ այդպէս էլ գրէի անունս՝ ո՛չ ոք բան չէր ասելու:

Ուստի վստահութեամբ ես յայտնուեցի Հոգեւրի տան դռան: Դեռ առաւօտ էր, և ես զարմացայ, երբ նրանց տան դռան տեսայ մի խումբ կառքեր—մի հանգամանք, որ սովորական չէ անգլիական կեանքում: Կառապաններն ու ծառաները բոլորն էլ իրանց գլխարկներէ վրայ՝ փակցրել էին սպիտակ ժապաւէնի փունջներ. կարծես թէ նրանք կանգնել էին այնտեղ որպէս զրօշմներ՝ տունը չար աչքից պաշտպանելու համար:

—Այս ի՞նչ լսաբար է, հարցրի ես դուռը բացող ծառայից:

—Հարսանիք կայ, պարոն, ասաց նա. օրիորդը ամուսնանում է:

Այս լուրը լսելով, թէ և երկար ժամանակ էր ինչ ես զսպել էի զգացումներս և գլխիցս հանել էի Բէսիի հետ ամուսնանալու միտքը, այնուամենայնի արիւնս երեսիս զարկեց և ես այլայլուեցի: Ես մտածեցի իսկոյն վերագառնալ. բայց պատուհանից իր գլուխը դուրս բերեց մի կին՝ (նա տիկին Հոգն էր) և ճանաչելով ինձ, ձէպց. «Ահա իշխանն այնտեղ է, այ՛, նա է» և շուտով ես լսեցի նրա ոտնաձայնը, որ իջնում էր սանդուխտներից:

Նա դուրս եկաւ. ինձ ներս հրաւիրեց և այնպիսի հաճոյացուցիչ խօսքեր ասաց, որ ես անճարացայ և հետեցի նրան գէպի այն սենեակը ուր շատերն հաւաքուած էին:

Էլ ի՞նչ ասեմ: Այդ սենեակում ես տեսայ մարդիկ ու կանայք, որոնք սովորականից աւելի լաւ շորեր էին հագել: Թէպէտ նրանք լաւ զարդարուած էին, բայց նրանց երեսները շատ մուայլ էին, տխուր էին երևում նրանք: Բէսին էլ այնտեղ էր, նա նստած էր իր երկու բոյրերի մէջտեղ և շրջա-

պատուած էր մի բանի ուրիշ աղջիկներով: Նրանք բոլորն էլ սպիտակ շորեր էին հագել: Բայց Բէսիի գլխին մի երկար նուրբ մարմաշ կար, որ իջնում էր մինչև գետին: Անհաւատները այն իրանց կարծիքով քօղ էին համարում, բայց դա հազիւ այնքան էր ծածկում երեսը, որքան անգլիական ներքնազգեստը ծածկում է սրունքները:

Խեղճ Բէսի, անճարացած աղջիկ, նա ամենից աւելի տխուր էր: Նրա երեսի վրայ այլևս չէր երևում այն ուրախասրտութիւնը, որ այնպէս լաւ սազում էր իր կլոր և զուարթ դէմքին: Նա նիհարել էր, հոգսից մաշուած էր երևում և նրա աչքերը կարմրել էին շատ լացելուց: Եւ շատ զարմացայ այս բանի վրայ. մեր երկրում հարսանիքը ցնծութեան և զուարճութեան նշան է. բայց այստեղ պարզ էր, որ հարսանեկան հանդէսի առաջին մասը շատ տխուր էր անցնում: Ինչևէ, հանդիսականները ըստ կարգին ողջունեցին ինձ, և յետոյ տիկին Հոգը ծանօթացրեց ինձ իր աղջկայ ամուսնութեան պատմութեան հետ:

— Տեսնո՞ւմ էք իշխան, ասաց նա, ահա մենք ամուսնացնում ենք մեր Բէսիին. նա մի շատ սիրելի աղջիկ է, նա լաւ նկարիչ և երգիչ է, և վստահ եմ որ նա լաւ կլին կը դառնայ: Նա շատ էլ կը հարստանայ. նա իր սեփական կառքը կ'ունենայ և չափազանց երջանիկ կը լինի:

— Ապա ինչո՞ւ է նա լալիս տիկին, հարցրի ես:

— Օ՜ իշխան, ասաց նա, աղջիկները սովորաբար այդպէս են անում, նա տխուր է մեղանից բաժանուելու համար. որովհետեւ նա տեսնում է, որ չէ կարող միեւնոյն ժամանակ թէ մեզ ունենալ թէ ամուսնուել:

— Ո՞ւր է նրա ամուսնացուն, հարցրի ես ընականաբար սպասելով տեսնելու իմ նախկին հակառակորդին—այն ասպետական խթանով և դեռարոյս բեխերով երիտասարդին:

Տիկին Հոգը պատասխանեց որ ըստ իրանց սովորութեան՝ հարսն ու փեսան եկեղեցում պիտի հանդիպեն իրար, և ես տեսնելով, որ պարտաւոր եմ Բէսիի հետ ամուսնանալու յոյսս բոլորովին կտրեմ, ուստի յօժարութեամբ համաձայնուեցի կատարել տիկնոջ խնդիրքը, այսինքն որ ես էլ հարսի հետ գնայի եկեղեցին վկայ լինելու ամուսնութեան հանդիսին:

Եւ գնացի անմխիթար հարսի մօտ և նրա ամուսնութեան առթիւ շատ բարեմաղթութիւններ արի:

— Ալլահը ձեզ լարի առողջութիւն պարգևի, ասացի ես: Ալլահը ձեր տանը առատութիւն շնորհի, տայ Ալլահը, որ ձեր ամուսինը գեղեցիկ և աննախանձ լինի. Ալլահը չար աչքից ազատի ձեր զաւակներին, Ալլահը կատարի ձեր սրտի

փափագը, ունենաք ինչ տեսակ զգեստ որ ցանկանաք, և ինչ տեսակ խորտիք որ սիրէք—Ալլահը ամենաբարեբախտ ժամին շնորհի ձեզ ձեր բոլոր ցանկութիւնները:

Այս բոլոր բարեմաղթութիւններն անելով և վճռելով ընթանալ ճիշտ այնպէս ինչպէս երկրի սովորութիւնը պահանջում էր, սկսեցի նրա հետ վարուել ճիշտ որպէս իր մօտ ազգականը. մի ոսկի դրի նրա ձեռքը և հէնց որ շրթունքներս առաջ տարայ համբուրելու նրա աչքերի մէջ տեղը, նա իսկոյն յետ բաշուեց և ինձ էլ յետ հրեց, որովհետև մօրուքս խողտեց նրա կրեսը:

—Լաւ իշխան, Աստուած վկայ, ճշաց նրա մայրը, կէս կատակով, կէս լրջութեամբ, ով էր տեսել այդպէս բան: Պարոն Հոգ, դուք տեսաք այդ, ասաց նա, դառնալով իր ամուսնուն: Իշխանը ուզում էր համբուրել տիկին Ֆիդրիին, ինչպէս նա շուտով կոչուելու է:

Հայրը մօտեցաւ ինձ և ժպտալով ասաց.

—Է՛յ իշխան, ես տեսնում եմ, որ դուք աղջիկների ետեւից թրև ընկնող հաղուազիւտ անձ էք:

Ես շատ լուրջ կերպարանքով պատասխանեցի:

—Մեր երկրի սովորութիւնն այդպէս է. ոսկի տուր և համբուրիր:

Այս խօսքիս վրայ Ալլահի աղջիկ Մարիամը եկաւ մօտս մի ոսկի իր ձեռքում և շատ մեծ վստահութեամբ ասաց.

—Քոյրս, պարոն, ցանկանում է վերջացնել այդ: Այդպիսի ընծան այդպիսի բողէին՝ շատ վիրաւորական է:

—Իմ երկրի սովորութիւնն է, օրիորդ, ասացի ես, ոսկին բարի բախտ է բերում, ոսկին երջանկացնում է մարդկանց. Պարսկաստանում Շահը իր ձեռքով է ոսկի տալիս: Երդուում եմ պատուիս վրայ, օրիորդ, դա շատ լաւ սովորութիւն է:

Երբ խօսքս վերջացրի նրանք բոլորն էլ ըստ երևոյթին շատ ցաւեցին որ սխալ էին թարգմանել իմ դիտաւորութիւնը, և յետոյ նոյնքան անգամ շնորհակալութիւն յայտնեցի ինձ, որքան անգամ տրամադրուել էին դժգոհութիւն յայտնելու:

Բէսին շատ խնամքով պահեց իմ տուած ոսկին, և ասաց որ ինքը մինչև իր կեանքի վերջը կը յիշէ ինձ, այն յուսով որ իմ յիշատակը իրան երջանկութիւն կ'ընծայէր. բայց ես նըկատեցի որ խօսելու ժամանակ նրա սիրտը կարծես ուզում էր տրաքուել, երկու կտոր դառնալ:

Սկեզեցի գնալու բողէին պատուիրունց որ կառքերն առաջ քաշէն: Ես կարծում էին որ տանից դուրս գնալու

Ժամանակ հարսը կը համբուրէր իր հօր տան օջախը, ինչպէս սովորական է Պարսկաստանում. բայց նա բացի իր տեղից բարձրանալուց և ոտքի վրայ կանգնելուց՝ ուրիշ ոչինչ չարեց։

— Նա չպիտի համբուրի կրակատեղը, հարցրի ես նրա հօրից։

— Կրակատեղը, իշխան, զարմացաւ նա. ինչի՞ համար պիտի համբուրի։ Ո՛չ, ո՛չ, մենք այդպիսի բաներ չենք համբուրում։ Յետոյ մի քիչ մտածելուց յետոյ նա բացականչեց։

— Օ՛հ, ես հասկանում եմ, դուք կրակապաշտ էք, ես յիշում եմ այդ, դուք կրակապաշտ էք ու այդ է պատճառը որ համբուրում էք կրակատեղը։ Ո՛չ, ո՛չ մենք կրակատաշտ չենք։

Ես ժամանակ չունեցայ մտածելու անգլիացւոյ՝ մեր կրօնի մասին ունեցած արտակարգ տգիտութեան վրայ, որովհետեւ յանկարծ ես ինձ դտայ մի գեղեցիկ կառքում, որը մի երկու ուրիշ կառքերի հետ արագութեամբ գնում էր դէպի եկեղեցի։

Ամբողջ խումբը ժարդ և կին բոլորը իջան եկեղեցու դրան։

Միայն երաժշտութիւն կար. ո՛չ հրախաղութիւն կար ոչ ոտնացուպ-ի (stilts) վրայ պարել, ո՛չ էլ խնձոր զցել։

Մենք մտանք մի փոքրիկ սենեակ, ուր հանդիպեցինք փեսայի ազգականներին։ Ես այս ու այն կողմը նայեցի խթանաւոր երիտասարդին տեսնելու, բայց նա չերևաց։ Ես մի քանի բաներ հարցրի նրա վերաբերմամբ Բէսիի ամենակրտսեր քրոջից. բայց նա խորհրդաւոր կերպով իր գլուխը շարժեց և երեսը դարձրեց ինձանից։

Ես յետոյ հետաքրքրուեցի նրա մօտից թէ ուր էր փեսացուն։

— Իշխան, բացականչեց նա, միթէ դուք չէք ճանաչում նրան. ես այս ըուպէիս կը ծանօթացնեմ նրա հետ։

Եւ նա իսկոյն ճեղքելով հանդիսականները առաջ դնաց և ճչաց։

— Ֆեզըի, Ֆեզըի, արի այստեղ, ես ուզում եմ քեզ ծանօթացնել մի պարսկի հետ։

Նա յետոյ ինձ մօտ առաջնորդեց մի ծանր կոպիտ կերպարանքով մարդու, որը բոլորովին տարբեր էր իմ նախկին հակառակորդից և որի դէմքը ինձ ծանօթ թուաց։

«Արդեօք սա ո՞վ է», մտածեցի ես։

— Պարոն Ֆիզըի, սա իշխան Հաջի Բարբըրըն¹⁾ է, ասաց տիկին Հոգը։

1) Բարբըր (barber) սափրիչ է նշանակում։

Պարոն փեսացուն մեծ ինքնարտականութեամբ ձեռքը մեկնեց ողջունելու ինձ և ասաց.

— Մենք հին ծանօթներ ենք, մենք իրար հանդիպել ենք բարեկամ Լէվիի տնում:

Ես իսկոյն յիշեցի, որ նա այն բաղկաւն էր, որը այնքան պարծանքով էր խօսել մեզ հետ իր հարոտութեան մասին:

Ես նոր հասկացայ թէ Բէսին ինչու էր այնքան տխուր: Նրա տխրութեան բոլոր պատճառները այժմ բոլորովին պարզուեցին ինձ համար: Պարզ էր նա սիրում էր երիտասարդ բերիշին—տապիտակն խթանաւորին և որ նա բռնի էր ամուսնանում ոսկու և շաքարի տէր այս վատածնունդ մարդու հետ:

Սիրտս սկսեց վառուել և պարոն ու տիկին Հոգի բարեկամութիւնն այլ ևս ինձ անտանելի դարձաւ:

«Վերջապէս, մտածեցի ես, այս անգլիացիները վատ ազգ են: Նրանց հոգին փողի մէջ է քնած, նրանք ամուսնանում են, բաժանուում են, հաշտուում են և այդ բոլորն անում են փողի համար: Ես կ'այրեմ պառաւ Հոգի հայրը. երգւում և՛ օրհնեալ Մարգարէի անունով, որ կ'այրեմ»:

Ես պատրաստուում էի կշտամբել նրան, նրա համար որ իր գեղեցիկ աղջկան զոհում էր այդ գարշելի բաղկաւն, բայց թափօրն սկսեց մտնել եկեղեցին:

Որքան կարողացայ՝ լաւ ուշադրութեամբ ականջ դրի մոլլահի խօսքերին, բայց չէի կարողանում լաւ հետևել նրան, որպէսզի կարողանայի դատել նրա ասածները: Բայի դրանից, թշուառացած Բէսի կաղն ու դիրք անչափ գրաւում էր ինձ. նա չոգել էր իր փեսայի կողքին և նրան հարկաւոր էր իր քոյրերի օգնութիւնը այդպիսի մի բողբոս՝ որը կարծես թէ պիտի փորձէր նրա ամենամեծ քաջութիւնը:

Նա պիտի արտասանէր մի բանի բառեր, որոնք ինչպէս ևս հասկացայ, պիտի վերջնականապէս կընքէին նրա վիճակը: Շատ երկար ու համոզացուցիչ խօսքեր էին հարկաւոր, մինչև կարողանային այդ որոշ բառերը նրա կոկորդից հանել և նրա լեզուի ծայրը հասցնել: Եւ երբ այդ բառերը արտասանուեցին, բոլորը սարսափեցին տեսնելով որ տաքաբախտ զոհը ուշաթափուեց և ընկաւ իր մեծ քրոջ կուրծքին:

Իսկապէս այդ տեսարանը սիրտս կտոր-կտոր արեց:

Թէպէտ մեր երկրում ես շատ տխուր, շատ սիրտ խորովող տեսարաններ էի տեսել, այսուամենայնիւ պիտի ասեմ որ Անգլիայում՝ գոնէ ինձ՝ այդպիսի տեսարանը շատ անընակաւ և անտեղի երևաց:

Այնքան երկար ժամանակ էր ինչ մենք բացակայ էինք եղել Պարսկաստանից, ուր բռնութիւնը այնքան սովորական է, այնքան առօրեայ կեանքի դիպուածները, որ այստեղ տեսածս շատ խորթ թուաց, և մտքուժամ մեկնաստորին ջհանամ ուղարկելով աշխարհիս բոլոր Հոգերին, բաղկալներին և ջուհուհներին, գլխարկս թեք դրի, բեխերս ոլորեցի և կատաղի դէմքով դուրս ելայ եկեղեցուց, առանց մի խօսք ասելու հարսանքաւորներէից որեւէ մէկին:

Ես կարծում եմ, որ այդպէս կատաղած ես թընցի անհաւատների այդ սրբավայրի վրայ:

Գլ. ԺԳ.

Միւրգա Ֆիրուզը իր ծառաներին նաւ է նստեցնում Պոլիս ուղարկելու համար: Հաջի Բաբան նկարագրում է իրանց ճանապարհորդութիւնը մինչև այդ քաղաքը:

Դեսպանը վճռելով որ իր մօտ պահի ստրուկներից միայն մէկը՝ չեքքուհուն յանձնեց միւսին—Մահրուրին, և ամեն բան պատրաստ լինելով՝ մենք մնաք բարով ասացինք Լոնդոնին և երեսներս դէպի Թէհրան դարձրինք:

Որպէս հրաժեշտի ընծայ Ֆրանկները թոյլ տուին իւրաքանչիւրիս՝ իւրացնել մեր անկողնու սաւաններն ու վարագոյրները, որոնց վրայ երկար ժամանակ էր ինչ մենք մեր աչքերը տնկել էինք որպէս շատ լաւ ազնիւ կտորներ՝ գօտիներ և բաճկոնակներ կարելու համար:

Միւրգա Ֆիրուզը մեզ ասաց հրաժեշտի սովորական խօսքեր. մենք փոխադարձաբար ներեցինք միմեանց և համբուրելով անգլիացի ծառաներին և լացելով աղախինների համար՝ մտանք կառքերը և շուտով մեզ դտանք մեզ համար պատրաստուած նաւում:

Անգլիայից մեր հեռանալը այնպէս շքով չեղաւ, ինչպէս եղել էր մեր ժամանումը, և տարակոյս չկայ, որ ինչ էլ որ մեր դեսպանը լինէր, մեզանից ոչ մէկի հետ, ոչ ոք չվարուեց որպէս Շահի ներկայացուցչի:

Ընդհակառակը նաւի վրայ մեզ ստացան որպէս ապրանք: Մեզ համբեցին, մեր բեռների վրայ թուեր նշանակեցին և մեր անունները արձանագրեցին թղթի կտորների վրայ, որոնց վրայ նաւապետը դրեց իր ստորագրութիւնը, որով նա մի կերպ խոստում տուեց մեզ՝—մեռած կամ կենդանի՝ յանձնել Պոլսի մեր գործակալին:

Այն անձը, որի խնամքին յանձնուեցինք մենք և որը կաֆտան էր կոչուում, հօնչով մեր նախօրաներից մէկից աւելի չէր։ Նա մի հաստ, խոտադէմ մարդ էր, երեսը թիւրքմէնի երեսի պէս արեակէզ եղած։ Նա մեր վարք ու բարքին այնքան անծանօթ էր որքան անծանօթ էր դրախտի վայելքներին։ Մեր ամենօրեայ կերակուրի համար նա պատրաստել էր այնքան կովի միս—թէ թարմ և թէ աղի մէջ դրուած—որ կը բաւականանար ամբողջ Մազանդրանին։ Մի քանի հատ էլ հաւեր ունէր, բայց բրինձ՝ համարեա ոչինչ։

Բարեբախտաբար մենք մեզ հետ ունէինք մեծ մասը այն բրնձի, որ մենք Պարսկաստանից հետներս բերել էինք։

Այդ մարդը մեզ իւրաքանչիւրիս մի ծակ յատկացրեց քնելու համար, իսկ չէրքէզուհուն նա տուեց մի հարեմ, մի առանձին փոքրիկ սենեակ, ուր նա կարող էր կամեցած ժամանակ սողալով ներս մտնել ու դուրս գալ։

Այն բոլորից, որ մենք դուրս եկանք Լոնդոնի մեր տնից, տարաբախտ կիւնը բոլորովին փոխուեց։ Նա ընկաւ իր ընտկան ուրախ տրամադրութեան մէջ։ Նա այնքան երկար ժամանակ փակուած էր մնացել իր սենեակում, որ նա դրեթէ այնպէս անշնչացել էր, ինչպէս իր սենեակի վարագոյրները ու աթոռներն. բայց այժմ, երբ նա ընկաւ թարմ օդի մէջ և սկսեց մարդիկ տեսնել, նա ուրախութիւնից և յափշտակութիւնից գրեթէ գժուեց։

Նախ քան նաւի ճանապարհուրիւր, երբ իմացուեց որ չեքքեզուէին էլ այդ նուում է, մենք շրջապատուեցինք նաւակներով, որոնց մէջ նստած անհաւատները չափազանց հետաքրքրուում էին տեսնել նրան։

Մենք մինչև անգամ կասկածեցինք որ նաւապետը կաշառ էր ստացել մի երկու մարդկանցից, որ նրանց թոյլ տար մի քանի զրքեր իրանց ձեռքերում բռնած անամօթաբար գային մեզ մօտ և նկարէին կամ զրէին ինչ որ տեսնէին. բայց երբ նա տեսաւ, որ մեհմանդարը ամենայն նախազգուշութիւն գործ էր դրել, որ մեզ նաւում չկարողանային նեղացնել, պարտաւորուեց ստացածը յետ տալ և նաւի առաջաստները բաց անել։

Նս չեմ պատմիլ թէ մենք ինչ չարչարանք կրեցինք այս անիծեալ նաւում այդ անգութ նաւապետի ձեռքից։ Բաւական է ասել, որ եթէ մենք կատարեալ հաւատ չունենայինք նախասահմանութեան վրայ և եթէ համզուած չլինէինք որ մեր կրած դժբախտութիւնները ի սկզբանէ գրուած ու վճռուած են մեզ համար, մենք մեր այս ճանապարհորդութեան ընթացքում, աւելի վիշտ ու տառապանք կը կրէինք, քան մէկ ամ-

բողջ տարում կրում է իսլամի երկրում ճշմարիտ հաւատացեալներէից բաղկացած մի ամբողջ մարմին:

Ալլահ, Ալլահ էլ ի՛նչեր չքաշեցինք մենք. վիշտ, քամի, փոթորիկ, աղի ջուր և մինչև անգամ հարուածներ այդ շան նաւապետից: Այս ամենը մենք տարանք, բայց երբ մենք առողջ ու անվտանգ հասանք մեր նպատակատեղին, դարձեալ դարձանք մեր հին սովորութիւններին ու ձեերին: Կարծես թէ ճակատագիրը վերցրեց մոռացութեան սպունգը և մեր մտքից ջնջեց կրած չարչարանքները ու նրանց յիշողութիւնները:

Ինչնէ պիտի խոստովանուեմ, որ չերքեզուհին, իր վարքով շատ մեղմացնում էր մեր վշտերը. նա ամեն բան ընդունում էր ուրախութեամբ և իսկական վտանգի ըրպէին, երբ ծովը մեզ ցնցելով յետ ու առաջ էր գլորում և մեր երկիւղն այնքան սաստկանում էր, որ կարծում էինք թէ մեր վերջին ըրպէն է՝ նա զինում էր մեզ մի քաջութեամբ, որ գերբնական էր երևում և ոգևորելով մեզ՝ յիշեցնում որ մենք շուտով պիտի տեսնէինք Ստամբուլի մինարէթներն ու գմբէթները և որ ամեն ըրպէ մենք աւելի ու աւելի մօտենում էինք մեր տներին ու ընտանիքներին:

Մի ֆրանկ կին նրանից աւելին չէր կարող անել, և յիւրաւի, երբ եղանակը լաւանում է, երկինքը պարզւում և աշողութիւնը կրկին փայլում էր մեր վրայ, մենք նրան լաւ վարձատրում էինք, բացականչելով մաշալլահ ու բարիբալլահ, և գովում էինք նրա հերոսական վարքը:

Եւ վերջապէս հասաւ երջանկատար ըրպէն, երևացին մինարէթները և ըրլորս հաւաքուեցինք տախտակամածի վրայ տեսնելու փառաւոր տեսարանները: Մինչև անգամ տգեղ անգլիացի նաւապետն էլ այդ օրը գեղեցիկ էր երևում մեր աչքում, որովհետեւ այդ ժամանակը և միայն այդ ժամանակն էր, որ ժպտի արևը փայլեց նրա փոթորկալից ճակատի վրայ:

Եւ՝ երբ մենք խարխիւ ձգեցինք և մեր առջև պարզուեցին ոսկեփայլ պալատները, կամարակապ փողոցները, նոճիների անտառները և անծայր քաղաքը իր բազմատեսակ գեղեցիկ շինութիւններով, մենք հոգոց հանելով փառք և գոհութիւն մատուցինք Ալլահին—մեր փրկչին ու ազատչին, այնպիսի ջերմեռանդութեամբ՝ որպիսին կարող են հասկանալ միայն նրանք՝ որոնք շատ ձախորդութիւններ կրելուց յետոյ, վերջը հասնում են աշողութեան նաւահանգիստը:

Մի ներքին ոյժ մեզ դրդեց ամենից առաջ թողնել մեր բանտն ու բանտապետը և իսկոյն ցամաք իջնել:

Յամաք իջնելով, Ստամբուլում իմ ունեցած բոլոր ար-

կածները այնպէս թարմացան յիշողութեանս մէջ, որ կարծես դրանք միայն երէկ էին պատահել ինձ. և քանի որ ես լաւ ճանաչում էի այդ քաղաքի բոլոր խառնիխուռն փողոցները, շուտով հասայ մեր Շահի գործակալի տունը: Այստեղ մենք գործածեցինք մեր «առաջին շունչը» պատմելով մեր արկածները անթիւ լրեր հարցնելով մեր ընտանիքների ազգականների մասին: Մենք շատ դառնութեամբ խօսեցինք մեր նաւապետի մասին: Մոհամէդ Բէգը երդուեց որ ինքը չոնդոնում անհաւատների մէջ այդքան ապրելով այնքան չէր պղծուել, որքան պղծուել էր նաւում և տանջանքներ էր կրել նաւապետի ձեռքից: Նա ասում էր, որ իբր թէ մի անգամ չպատահեց որ ինքն գնտը տախտակամածի վրայ և պիղծ գազանին¹⁾ չտեսնէր ազատ շրջելիս այնտեղ: Եւ նա աւելացրեց, որ այդ գազանի միւր ամեն անկիւնում ուտում էր, և եթէ մենք միացած ուժով չդիմադրէինք նաւապետին, գուցէ, նա մեզ էլ կ'ուտացնէր այդ նոյն մսից:

Յետոյ Աղա Բէգը, (ախոռատետը) երդուեց Մարգարէի ձօրուքով, որ նաւում եղած ժամանակ՝ ինքն այնքան ձիու կարօտութիւն էր քաշել, որ ինքն էլ գրեթէ անասուն էր դարձել. և հէնց որ նա հասաւ գործակալի տունը, վազեց բռնեց առաջին ձին որ կարողացաւ գտնել, հեծաւ և յետ ու առաջ ըջեց փողոցներում այնպէս վայրենաբար, որ բոլոր տաճիկները հաւատացին թէ նա ժառանգել էր Ֆրանկների բոլոր գոլութիւնը:

Ես շարժուեցի՝ իսկոյն մի կարգին բնակարան պատրաստեցի չէրքեզուհու համար, իրերը նաւից ցած բերել տուի և յետոյ գնացի անգլիական դեսպանատունը մեր նամակները յանձնելու: Զանապարհին ես հանդիպեցի նաւապետին, որը երբ տեսաւ որ ես գնում եմ իրանց մեծաւորի տունը շատ խոնարհաբար բարեկեց ինձ և առաջարկեց ինձ հաշտուել և բարեկամանալ իր հետ. բայց նա չկարողացաւ խաբել ինձ. ես շարունակեցի ճանապարհս և թողի նրան որ բերանը չոած՝ մարսէր այն աղտեղութիւնը, որ ինքը կերել էր վերջին երկու ամսի ընթացքում:

Ստամբուլում անգլիացիները ինձ այնպէս չընդունեցին որպէս՝ նրանց հայրենակիցները ընդունէլ էին Անգլիայում: Պարզ էր, որ Տաճկաստանում այնքան երկար ու մեծ-մեծ մօրուքներ կային, որ մերը ցախաւելից էլ դեռ աւելի աննշան բաձեր էին երևում: Այստեղ ինձ հետ ոչ ոք չկատարեց ձեռք թօթուելու ծէսը և ոչ ոք չասաց «ինչ լաւ եղանակ է»՝ Նրանք

1) Խոզեր, ձ. ք.

կարծում էին, որ մեր ձեռքը մի երկար չիբուխ դնելով կատարում են քաղաքավարական ամեն օրէնք և պատասխանում են ամեն հարցի:

Մեր երկրին մօտենալով՝ ես սկսեցի նոր հասկանալ այն խօսքի ճշմարտութիւնը թէ՛ «Հրապարակում ամեն մարդ քո գեղեցիկ վերարկուն տեսնելով յետ է քաշւում, ճանապարհ է բաց անում և ասում է մաշւլլահ. բայց տանը ամեն մի երեսայ կարող է համբել շորերիդ այն ծակերը ու կարկատանները, որ ծածկուած են վերարկուիդ տակ»:

Գլ. Ժդ.

Հաջին եւ իր ընկերները հասնում են Թէհրան—հա ներկայանում է Շահին եւ պատուոյ զգեստ է ստանում նրանից—Հաջի Բաքայի արկածների վերջաւորութիւնը:

Վարձելով մեզ հարկաւար եղած ջորիները և լրացնելով մեր ճանապարհորդական պատրաստութիւնները, ճանապարհ ընկանք և մի քանի օրերից յետոյ մենք արդէն մօտենում էինք մեր երկրին, մեզանից ոմանք ուրախութիւնից զլուխները երկնքի աստղերին հասած համարելով և ոմանք էլ տըխրութիւնից քթները Վիտուս մէջ խրած»:

Ճանապարհին, պատմելու արժանի ճշինչ դէպք չպատահեց մեզ. մենք միայն հանդիպեցինք մի ֆրանկի, որը Տիեզերքի Կենտրոնի մայրաքաղաքից վերադառնում էր հայրենիք:

Դէլֆարիբը որին մենք յանձնել էինք մի պարսիկ աթիւղչու¹⁾ պաշտպանութեանը, տեսնելով այդ անհաւատին՝ ուրախութեան անպիսի մի բացահայտութիւն արեց, որի նմանը ոչ մի կին երբէք չէր անիլ նոյնիսկ իր հօքը կամ հօրեղբորը տեսնելիս: Այս բանն այնքան զարմացրեց դաթիւղչուն, որ առանց մի ըոպէ տատանուելու մտրակի երկու-երեք այնպիսի ուժգին հարուածներ տուեց նրան, որ նա սկսեց սաստիկ ցաւից ճչալ:

Մենք՝ որ նրան իսկապէս սիրում էինք որպէս մեր քոյրը, իսկոյն նրա կողմն անցանք և մօտ էր որ սպանէինք ջորեպանին՝ երբ յանկարծ յիշեցինք որ մեր ազատութեան օրերը այժմ անցած էին, որ մենք այժմ գտնւում էինք մահ-մեղականների մէջ, և որ կանանց ազատութեանը պաշտպան

1) Զորեպան, ծ. Բ.

հանդիսանալով՝ մենք միայն կը խայտառակէինք մեզ և ինքնե-
րս գերի կը տարուէինք:

Այս փոքրիկ դէպքը փայլուն ապացոյց էր թէ քրիստո-
նէի երկիրը ինչքան մեծ առաւելութիւն ունի մեր երկրի
վրայ:

Ինչ և է, կամաց-կամաց վերսկսելով միւր հին սովորու-
թիւնները, նոյնպէս կամաց-կամաց թուլացան օտար երկրում
մեր օտացած տպաւորութիւնները և սկսեցինք մտածել որ
գուցէ Դէլֆարիքը յանցաւոր էր և շորեպանը իրաւունք ունէր
նրան պատժելու:

Մինչդեռ Տաճկաստանի քարքարոտ ճանապարհներով
իւրաքանչիւրս մեր պառաւած, բանից ընկած ջորու վրայ նըս-
տած տմտմբալով գնում էինք, մտածում և համեմատում էինք
մեր այս ճանապարհորդութեան ձևը ու դանդաղութիւնը այն
ճանապարհորդութեան հետ որ զարմանալի ձևով և արագու-
թեամբ անում էինք Անգլիայում:

— Իսկպէս այդ խանէ խարաքները, այդ անխժած շուն
անհաւատները բացի այն որ գարեջուր ունենալու արժանա-
ւորութիւն ունէին ուրիշ շատ արժանաւորութիւններ էլ ունէ-
ին, երբեմն ասում էր Մոհամէդ բէգը՝ Մաշնլլահ, մաշնլլահ
արդեօք Թրք կրկին կը տեսնէինք նրանց հրաշալի կառքերը և
էրբ կրկին կը քնէինք ֆրանկների քարվանսարաններում: Ամեն
անգամ երբ ես պառկում եմ քարայտակ սննեակում, երազում
եմ այն Գրիստոսի որդիների փափուկ բարձերը ու աղուամա-
զով ներքնակները:

Վերջապէս էրզրումում մենք այցելեցինք փաշային, որը
դեռ չէր մոռացել մեր դեսպանին և նրա ականջները կտրած
ծառային:

Թարբիզում մենք մեր ճակատները տրորեցինք թագա-
ժառանգի պալատի դրան սեւմին: Երբ ներկայացանք նրան նա
այնպիսի հարցեր տուեց մեզ, որ մենք համոզուեցինք, որ եթէ
նա տեսած լինէր մեր տեսածները՝ նրա մտքի պարտէզը այն-
թէս կը բեղմնաւորուէր և այնպէս պտուղներ կ'արտադրէր՝ որ
մեր կառավարութիւնն էլ շուտով կըստանար Անգլիայի կառա-
վարութեան ձևը:

Ես պիտի յիշեմ և՛ այն որ մեր՝ էրզրում թողնելուց
մի քանի օր յետոյ, մենք հանդիպեցինք մի խումբ ձիա-
ւոր քիւրդերի, որոնք լաւ տրամադրուած էին զրկելու մեզ
մի քանի արժէքաւոր բաներից, որ մենք հետներս բերում է-
ինք Փրանկստանից: Նրանք պատրաստուած էին խուզարկել
մեր սնդուկները, երբ յանկարծ վրայ հասան մի վաշտ զինուած

տաճիկ զինուորներ, որոնք իսկոյն պաշտպանեցին մեզ. բայց մի կատաղի կռիւ տեղի ունեցաւ նրանց և աւազակների մէջ:

Միրզա Ֆիրուզի և անգլիական կառավարութեան ինձ յանձնած նամակները՝ ինչպէս և մի քանի ուրիշ շատ պիտանի բաների պատասխանատուն ես լինելով՝ ստիպուեցի միջամտել: Սուրս հանելով՝ ես առաջ գնացի և քաջաբար շատ խօսքեր ասացի քրիդերին. բայց յանկարծ նրանցից մէկը իր ձիուն մի պտոյտ տուեց և այնպէս արեց որ նա իր պոչով մի խիստ հարուած տուեց երեսիս. և մի ուրիշ հնարքով էլ նրան այնպէս գրգռեց որ նա սկսեց աքացիներ զարկել, որոնց մէկը այնպէս ուժգնաբար կպաւ բերանիս որ բերանիս ատամներից երեքը բխերիս ամենալաւ մասի հետ ընկան կոկորդս:

Այս՝ չափազանց մեզ դժբախտութիւն էր որ ինձ պատահեց. որովհետեւ ես այլ ևս չէի կարող խելքիս հետ դործ ածել լեզուիս ւայն ոյժը, որով ես մեծ յոյս ունէի շահելու արքայից արքայի շնորհն ու պաշտպանութիւնը:

Ինչ և է, Ալլահի ողորմութեամբ ազատուելով աւազակ քրիդերից՝ երեսն ու ժօրուքս փաթաթեցի մի շալով և խղճալի դրութեամբ մտայ. Թաքրիդ:

Մոհամէդ բէգը յանձն առաւ պատասխանել մեր պերճ իշխանի հարցերին, իսկ ես ինձ վերապահեցի Շահի հարցերին պատասխանելու համար. յուսալով որ մինչև այն ժամանակը որ Ալլահի ողորմութեամբ կ'արժանանայինք Դէմաւանդի ձիւնը տեսնելու, բերանս առողջացած կը լինէր և ես կարող կը լիւնէի խօսել նորին մեծութեան հետ:

Եւ յիշաւի այդպէս էլ եղաւ: Այն օրը որ մենք Թէհրան հասանք բելսերս վերականգնել էին իրանց նախկին գեղեցկութիւնը և միակ պակասութիւնը որ ես ունէի՝ ատամներիս բացակայութիւնն էր:

Դեռ Բառաշի մերձակայքումն էինք, որ մեզ դիմաւորեցին մեր բոլոր բարեկամները: Բացի երկու հոգուց, որոնք դահճապետի ծառայութեան մէջ եղածս ժամանակ իմ ընկերներն էին՝ եղել, ուրիշ ոչ ոք չկար որ ինձ ճբարի ես եկելը ասէր:

Քաղաքը մտնելուց առաջ, Միրզա Ֆիրուզի հարեմի ծառաներից մէկը Դէլֆարիբին ընդունեց, և մենք այդ ժամից այլևս երբեք չտեսանք նրան:

Ես ուղիղ գնացի մեծ վէդիրի տունը և իմանալով որ նա արքունիքումն էր՝ գնացի այնտեղ և կօշիկներս հագիս, ինքս էլ ոտից մինչև գլուխ փոշաթաթախ՝ ներկայացայ նրան, յանձնեցի նամակները և կանգնեցի նրա առջև:

Այդ ժամանակուայ մեծ վէդիրը իմ նախկին պաշտպանի

բարեկամ չէր եղել. այդ պատճառով նա մի քանի րոպէ ինձ իր առջև կանգնած պահեց ապա հրաւիրեց սենեակը: Կարդալով նամակներից մի երկուսը՝ նա ասաց.

— Խօշ ամէդիդ (բարի էք եկել) ասաց նա և հաճեցաւ մի յարմար տեղ շնորհել ինձ Թաղիքի վրայ:

Իմ ծանօթներից շատերը հաւաքուած էի այնտեղ: Ինձ ճանաչելով շատ սիրալիւր խօսքեր ասացին:

— Բաբի էք եկել, մեր աչքը լոյս, ձեր տեղը երկար ժամանակ դատարկ էր մնացել, ասացին նրանք:

Մեծ վէզիւրը շուտով ելաւ Շահի մօտ գնալու, յայտնելու իմ ժամանուածը և բերածս նամակները մատուցանելու: Երբ նա գնաց բարեկամներս սկսեցին անթիւ հարցեր տալ ինձ:

— Ի՞նչպէս տեղ է Ծրանկատանը, հարցրեց մէկը:

— Փանոբ Ալլահին ասաց մի ուրիշը. Հաջի, դուք շատ գեղեցիկ կանայք պիտի տեսած լինէք:

— Անէժք նրանց մօրուքներին, անհաւատները բոլորն էլ պիղծ են, ասաց անկիւնում նստած մի դաժանադէմք ակտոր մուլլահ:

— Ծշմմրիտ է, ասաց մի ուրիշ մուլլահ, որ ասում են թէ այդ անհաւատների կանայքը պատկառանք չունին, և որ նրանց ամուսինները երբէք չեն գործադրում մաքրութեան սահմանուած օրէնքը որոշ գործողութիւնից յետոյ...

— Այդ ի՞նչեր ես հարցնում, բացականչեց մի միւրզա: Նըբանք Յիսուսի ցեղից են և պարզ է որ նրանք բոլորն էլ պիղծ ու անպիտան են:

— Բայց նրանք ունեն իրանց էնջիլը (աւետարանը), ասաց մի Բասրայի վաճառական, և այդ էնջիլը վերջապէս մի բան է իր համար: Զարմանալի բաներ կան այդ գրքում:

— Այդ գիրքը աւելի ատելի, աւելի արհամարհելի է քան անապատում ջայլամի ածած ձուռն, վրայ բերեց ակտոր մուլլահըն: Ի՞նչ է դա համեմատած մեր սուրբ Ղորանի հետ:

Զկամենալով ինձ զսպել՝ ես նկատեցի.

— Եթէ դուք, ով մուլլահ, Ֆրանկներին տնանէիք, նրանց մէջ միաժամանակ ապրէիք և քննէիք ու տեսնէիք թէ էնջիլը ի՞նչ դարձանալի պտուղ է արտադրում, այն ժամանակ ինքներդ փոխանակ արհամարելու՝ կը յարգէիք դրան որպէս գրքերից ամենաառաջինը:

Ես նկատեցի որ իմ խօսքերը ոչ ոքի դուր չեկան, որովհետեւ միակ պատասխանը որ ես ստացայ՝ այս էր.

— Բաբի, մըջիւնը կարող է ոսկրուղեղ ունենալ և մէկ թենն էլ նշանակութիւն ունի ճանճի համար:

Մինչ այս, վէզիրը արդէն յայտնել էր Շահին իմ ժամանումը, որովհետեւ ներքին սենեակներին պատկանող մի ֆէրաշ եկաւ ինձ մօտ և իշխանաբար ասաց.

— Շահը քեզ ուզում է.

Ես վեր ելայ և որքան կարող էի խելքս գլուխս հաւաքելով հետևեցի «հարուածներէ մարդուն», վերարկուիս առջևի փէշերը վրայ քաշած՝ որպէսզի մարմինս չերևար:

Ես աշխատեցի յեղել պարսկական քաղաքավարութեան և յարգութեան այն բոլոր ձևերը, որոնք, երկար ժամանակ ֆրանկների մէջ ապրելով՝ մեծ մասամբ ջննջուել էին մոքիցս: Այո, ես աշխատեցի յիշել այդ ձևերը, որպէսզի կաշողանայի վայելուչ ձևով խօսել Շահի հետ. մէկ էլ գիտէի, որ առանց դրանց՝ ականջներիս ապահովութեան համար չէի կարող երաշխաւորել:

Երբ գլուխս խոնարհեցնում էի անցնելու այն կարճ դռնիցը որ տանում էր խալիվայի ստանէն (առանձնատուն), աչքիս ընկան արքայից արքայի գլուխն ու ուսերը, որովհետեւ նա նստած էր դիմացի բաց պատուհանի յետևը: Ես իսկոյն երկուտակուեցի և գլուխս տուի նրան: Ապա անցայ ծառայողների միջով, մինչև հասայ այնտեղ ֆէրաշը հրամայեց ինձ կանգնել: Շահը տեսաւ ինձ և մի քիչ սպասելուց յետոյ հրամայեց ինձ առաջ գնալ: Ահ ու դողով ես առաջ գնացի առանց կօշիկներս հանելու, որովհետեւ քաղաքավարութիւնն այդ էր պահանջում. բայց երբ հասայ այն աւազանի մօտ որ գտնուում էր արքայական պատուհանի տակ, չոգեցի և գետինը համբուրեցի:

— Դու Հաջի Բարան ես, հարցրեց Շահը:

Ես խոր գլուխ տուի:

— Բարի ես եկել:

Ես կրկին գլուխ տուի:

— Որեւէ փէշքաշ (ընծայ) բերել ես Շահն Շահիդ համար, հարցրեց նորին մեծութիւնը ժպտալով:

— Հոգիս ձեր մեծութեանը փէշքաշ, ասացի ես: Ինչ որ ձեր սարուկը ունի՝ Շահինն է: Նուաստս քսան հատ ֆրանկստանի ոսկի եմ բերել ձեր գահի ոտների առաջը դնելու:

Եւ ծոցիցս հանելով քսան ոսկին, որ Անգլիայից բերածիս միայն մի մասն էր՝ դրի մի ոսկի մատուցարանի վրայ որ մի բերիշ իսկոյն բերեց և ինքն էլ տարաւ Շահի առաջ:

— Հաջի Բարան բարի ծառայ է, ասաց Շահը իր վէզիրին: Նա վերադարձել է սպիտակ երեսով, նա յարգում է ինձ, գնահատում է կեանքս:

— Բնի, բնի, ասաց մեծ վէզիրը, որտեղ իջնում է ար-

բայական շնորքը այնտեղ միշտ գտնուում են սպիտակ երեսներ:

Այդ ընկերին մի զայլան մատուցուեց Շահին, որը զննելով ինձ ասաց.

— Լաւ, Հնչի, ուրեմն դու տեսէ՛լ ես Յրանկատանը. ի՞նչ պէս տեղ էր:

— Տիեզերքի ապաւենի շնորհիւ՝ վատ տեղ չէր ասացի ես:

— Ինչպէս տեղ է դա Պարսկաստանին համեմատած, հարցրեց Շահը:

— Դուրբան լինեմ ձեզ. ոչ մի համեմատութիւն չկայ, պատասխանեցի ես:

— Լաւ, ասաց նորին մեծութիւնը. իւրաքանչիւր երկիր ունի վայելքի և հաճոյքի աղբիւրներ. բայց ճշմարիտ, աշխարհում մեր Իրանի պէս տեղ թրտեղ կայ. կամ միրզա, դարձաւ վէզրին, և կրկնեց Հաֆէզի այս յայտնի տողերը:

Ուրախութիւն Շիրազի հրաշալի դաշտում,

Ուր տիրում է ժպտուն խաղաղութիւն, առատութիւն,

— Այ բարի բալլահ, ինչքան գեղեցիկ, բացականչեց վէզիրը: Բայց ում շունն է Հաֆէզը եթէ նրա խօսքերը համեմատենք արքայից արքայի ասած և երգած խօսքերի հետ ¹⁾:

— Դու վատ շնա ասում, ասաց նորին մեծութիւն ձեռքը ժօրուքին քաշելով: Մենք էլ ենք գրել երկտողեան ոտանանաւորներ. բայց այդ անպիտան Հաֆէզը մի հանճար էր, որի նմանը մենք այլ ևս չենք տեսնելու: Նա Շերազցի էր և արժանի էր այդ քաղաքի բնիկը լինելու:

Յետոյ դառնալով ինձ՝ ասաց.

— Յրանկներն էլ բանաստեղծ ունին:

— Դուրբան լինիմ ձեզ, նրանք էլ ունին, ասացի ես. բայց նրանք երբէք չեն կարող համեմատուել Հաֆէզին կամ Սաադին:

— Բայց նրանք սոխակներ չմանին:

— Ոչ, նրանք ամենևին չունին, բայց շներ շատ ունին:

Շահը հաճոյացաւ երբ տեսաւ որ ես փորձում էի սրտխօսել, և բարձրաձայն ծիծաղելով ասաց.

— Լաւ ասացիր Հնչի. Շահի հոգին վկայ լաւ ասացիր: Այո, ես վստահ եմ որ նրանք շատ շուն բանաստեղծներ ունեն:

— Մաշալլահ բացականչեց վէզիրը: Ի՞նչ հանճար, ի՞նչ նրբամտութիւն. մաշալլահ:

1) Յաթ Ալի Շահն ինքն էլ (1810-ին) բաւական մեծ բանաստեղծի էր:

—Ուրեմն նրանք բանաստեղծ էլ ունեն. ասաց նորին մեծութիւնը, էլ ինչ ունին. ասում են որ նրանց կանայքը լաւն են. ճիշտ է:

Այո, նրանց կանայքն լաւ են, նրանք իսկապէս արժանի են կանգնելու Շահի առաջ. գոնէ ձեր խոնարհ ստրուկը այդպէս է կարծում:

—Այդպէս, ասաց նա: Մենք ամեն ազգից կանայք ունենք—չէրքեզուհիներ, վրացուհիներ և հրէուհիներ. ֆնում է ֆրանկի կին էլ ունենանք՝ որ կատարեալ լինի: Հնչի, դու ինչու նրանցից մէկը փէշքաշ չբերիր ինձ համար: Շահի մօրուքը վկայ որ եթէ մէկը բերած լինէիր՝ մեծ շնորհ կը վայելէիր մեզ մօտ:

—Ի՞նչ աղաչեմ, ո՞վ Շահընշահ. ձեր ստրուկը սխալուել է: Ես այնքան բազմաթիւ ֆրանկ կանայք տեսայ որ չէի հասկանում թէ նրանցից որն էր բաւական արժանաւոր. բայց եթէ ձեր մեծութիւնը հրամայի իր դեսպանին, որը դեռ Անգլիայում է, գուցէ նա կարողանայ կատարել ձեր հրամանն ու ցանկութիւնը:

—Դու վատ չես ասում, Հնչի, ասաց Շահը: Մենք մի ֆրանկ կին կ'ուզենք:

Յետոյ դառնալով վեզիրն՝ ասաց.

—Ուրիշ ի՞նչ էր որ մենք մտածում էինք բերել տալ Ֆրանկստանից. յիշում ես:

—Ղուրբան լինիմ ձեզ, ասաց վեզիրը, ձեր ստրուկը կարծում է որ լրտեսելու դիտակ էիք ուզում:

—Ճիշտ է, ճիշտ հէնց այդ էր, ասաց Շահը. մի դիտակ, մի լաւ դիտակ, մի հրաշմլի դիտակ ենք ուզում: Յետոյ դառնալով ինձ ասաց.

—Ճիշտ է որ ասում են թէ այդ երկրում այնպիսի դիտակներ են լինում, որ նրանցով մարդ կարողանում է սարի միւս կողմը տեսնել:

—Քանի որ ձեր մեծութիւնը այդպէս է ասում՝ ճիշտ է, պատասխանեցի ես. բայց ճշմարիտն ասած՝ ես բախտ չունեցայ այդպիսի բան տեսնելու, սակայն քանի որ ես ձեր ղուրբանն եմ, ձեր հրամանով ես կ'աղաչեմ որ Ֆրանկստանում ես տեսել եմ շատ ուրիշ բաներ, որ այնքան սքանչելի են. ուրեմն ոչ մի պատճառ չկայ կարծելու թէ այդպիսի դիտակ չեն շինում:

—Ուրիշ ի՞նչ բաներ ես տեսել, ասա համարձակ:

—Ես տեսել եմ մի նաւ, որ ամենաարագավազ ձիու արագութեամբ դնում է կատաղի քամու հակառակ, և համար-

ձակուում եմ ասել որ եսուն ջրի գոլորշին է որ նաւին այդքան մեծ ուժով առաջ է մղում:

—Հնչի, ասաց Շահը, մի բիշ ապշելուց յետոյ, Հնչի, այստեղ սուտ մի խօսիլ: Մենք էլ վերջապէս թագաւոր ենք: Թէպէտ դու գնացել ես Ֆրանկների երկիրը, բայց սուտը սուտ է. որտեղից էլ որ գայ՝ դարձեալ սուտ է:

Շահի այս խօսքերը կարծես թէ լեղուս չորացրին բերանումս, բայց սիրտ առնելով՝ ասացի.

—Շահի աղով երգում եմ... Թող գլուխս այս րոպէիս կըտրուի... ես ձեր դուրբանն եմ... ես երգում եմ որ աղաչածս սուտ չէ, և եթէ մի Ֆրանկ լինէր այստեղ, և այդ Ֆրանկն էլ մարդ լինէր՝ կը հաստադէր ասածս:

—Կրկին ասա, ասաց Շահը մի քիչ մեղմանալով. այդ ի՞նչ գոլորշի է որ այդքան ոյժ ունի որ կարողանում է այդպէս հրաշք գործել:

Ես երկար բացատրութիւն տուի մի շոգեմեքենայի մասին որ տեսել էի, և հասկացրի թէ շոգին ինչպէս է գործում նաւի անիւների վրայ:

—Բայց այդքան մեծ քանակութեամբ շոգի հանելու համար, ասաց նորին մեծութիւնը, նաւի մարդիկը իրանց նաւում պիտի ունենան բոլոր քէթլիների հայրը, ու պապը ու պապերի պապը¹⁾—այսինքն այնքան մեծ քէթլի՝ որի մէջ կարելի լինի մի ուղտ խաշել:

—Միայն մէկ ուղտ, տէր արքայ, բացականչեցի ես, դա այնքան մեծ է, որ մի շարք ուղտեր միասին կարելի է եփել մէջը:

—Զարմանալի, զարմանալի, բացականչեց Շահը խորը մտածելով: Եթէ այդպէս բան կայ, ուրեմն կասկած չկայ որ այդ Ֆրանկները կարող են այնպիսի դիտակ շինել, որով կարելի լինի սարի միւս կողմը տեսնել: Ուրեմն մի քանի հատը իսկոյն պատուիրիր, ասաց նա, դառնալով իր վէզրին:

—Աչքիս վրայ, ասաց վէզիրը խոնարհութեամբ:

—Էլ ի՞նչեր տեսար, Հնչի, պատմիր, բայց ղզուշացիր, յիշիր որ սուտ չպիտի խօսես, ոչ մի սուտ, եթէ ոչ Շահի մօրուքը վկայ մենք չենք գթալ քեզ:

—Աչքիս վրայ, ասացի ես: Բաղմաթիւ են այն հրաշքները որ ձեր շնորհիւ ձեր ստրուկը բախտ է ունեցել տեսնելու:

¹⁾ Աբու-ալ-ադամը քէթլիների հայրը. այդպէս են արաբները կոչում այն մեծ կաթսային, որի մէջ մեծ խնճոյներում մի ամբողջ ոչխար են եփում:

Պրանկստանում ամեն գիշեր բազմաթիւ մոգեր՝ վառուած ջահեր իրանց ձեռքում՝ վազում են փողոցներում և այնտեղ՝ ուր ոչ մի լոյս չկայ—հչ լամպ, ոչ փայտ և ոչ պատրոյկ՝ նրանք բողբոջալէս վառում են մի ճրագ որ վառուած է ամբողջ գիշերը:

—Ինչպէս է կարելի այդպիսի բան, ասաց Շահը: Բացի Բագուից, որ ամեն մարդ գիտէ թէ հրաշքների տեղ է և ուր դետնի տակից մի գոլորշի է դուրս գալիս որ կրակ է բռնում ու վառուում ես ուրիշ տեղի մասին այդպիսի բան չեմ լսել:

—Ղուրբան լինեմ ձեր մեծութեանը, ասացի ես. ես այժմ յիշում եմ որ մի անհաւատ վաճառական ինձ հաւատացրեց թէ՛ Անգլիան կարող է պատրաստել մի սուրբ բոց՝ աւելի մաքուր քան այն բնական կրակը որ դուրս է գալիս Բագուի գետնի տակից և որը շատ հարկաւոր է գետքերի տաճարների համար: Նա ասում էր որ այդ նորագիւտ կրակը կարելի է արտահանել աւելի աժան գնով՝ քան որեւէ ուրիշ տեսակ կրակ՝ որ ճարւում է Եաղդում, Սուրաթում և Բոմբայում:

—Մըթէ՞ այդ ճիշտ է, ասաց Շահը: Ես միշտ լսել եմ որ անգլիացիները մեծ վաճառականներ են և կարող են լաւ մահուդ պատրաստել. բայց դեռ չէի լսել որ նրանք կարող են կեղծ կրակ էլ պատրաստել:

—Երդում եմ Շահի գլխով, որ այդ ճշմարիտ է, ասացի ես, և եթէ ձեր մեծութիւնը կասկածում է ստորուկիս, և չէ հաւատում ինձ, ուրեմն հրամայեցէք ձեր դեսպանին որ Անգլիայից այդ կրակից մէկ սնդուկ բերի իր հետ. և ես վստահ եմ որ դա անփնաս կը հասնի ձեր գահի ոտը՝ մինչև անգամ եթէ ծովի վրայ պատահելու լինի աւելի սոսկալի փոթորկի քան այն որին հանդիպել է ձեր խոնարհ ստորուկը:

—Ուրեմն դու փոթորկի էլ հանդիպել ես, ասաց Շահը: Շարունակի՛ր Հնչի, ասա ինչ որ սրտումդ ունիս:

—Բնի, ձերդ մեծութիւն. երբ Անգլիայից Ստամբուլ էինք գալիս, մենք հանդիպեցինք մի շատ անեղ փոթորկի: Փոթորկի ժամանակ ես նաւի վրայից ցած նայեցի տեսնելու թէ մենք ինչքան արագ էինք գնում: Պատահմամբ բերանս բացի և կատաղի քամին այնպէս ուժով մտաւ բերանս որ ատամներիս երեքը արմատահան հանելով տարաւ կոկորդոսի վար:

Եւ բերանս բանալով ցոյց տուի այն փնասը որ ծնօտս կրել էր բիրդ աւազակի ձիու սմբակից:

—Ուրեմն այդպէս սոսկալի քամիներ կան, հարցրեց Շահը: Ելլուրդ լեռների բարձրութիւններից փչող քամիները բաւական ուժեղ են որ կարող են մեր մօրուքը պուկ տալ մեր

երեսից բայց քո պատմած սարսափելի փոթորկի գոյութեան մասին դեռ երբեք չէինք լսել:

Ինչքան ուրախացայ ես, որ կարողացայ իմ ճարտարութեամբ՝ օգտուել ինձ պատահած դժբախտութիւնից. պարզ յայտնի էր որ իմ պատմութիւնը շատ շահագրգռեց Շահին, և ես ոգևորուեցի այն յուսով, որ ճանապարհորդութեան ժամանակ կրածս բոլոր իսկական կամ կեղծ քնասներից աւելի շատ օգտուելով՝ հնարաւորութիւն կ'ունենայի մի մշտական պաշտօն ձեռք բերել արքունիքում:

Ես յետոյ սկսեցի մանրամասնութեամբ նկարագրել իմ ճանապարհորդութիւնս, պատմելով թէ ինչ զրկանքներ էի կրել, ինչքան կեղտոտութիւնների էինք հանդիպել, ինչքան էինք նեղացել, բարկացել, ինչպէս էինք փրկուել նաւաբերկութիւններից, ծովային աւազակներից, անգնդային հրէշներից և այլ դարհուրելի վտանգներից:

Պատմութիւնս այնպէս ազդեց մեր սիրելի Շահին, որ նա իր սովորական բարեսրտութեամբ, հրամայեց որ իսկոյն մի ձեռք պատուոյ զգեստ տրուէր ինձ:

Էլ ի՞նչ ասեմ:

Շահը արձակեց ինձ. գլուխս երկնքի աստղերին էր հասել: Երբ մարդիկ լսեցին թէ Շահը ինչքան քաղցրութեամբ էր ընդունել ինձ՝ ամեն մարդ սկսեց յարգել ու մեծարել ինձ: Գուցէ հասկացող մարդիկ կը մտածէին որ ես զրանից աւելին չպիտի ցանկանայի, բայց, արդեօք ես կը ներուիմ եթէ ասեմ որ դեռ մէկ բան էլ ցանկանում էի.—ես տենչում էի խան դառնալ:

Ես տենչում էի որ մի ֆիրման գլխարկիս փակցրուած՝ երեք օր պարծանքով շրջէի քաղաքում, որ մարդիկ տեսնէին թէ ես ի՞նչ աստիճանի էի արժանացել:

Միրզա Հաջի Բաբա խան անունը այնքան քաղցր էր հնչում ականջիս, որ ես այլ ևս չէի կասկածում որ այդպիսի մի շնորհը կը մերժուէր ինձ:

Ես սկսեցի ակնարկներով հասկացնել իմ իղձը, և միևնոյն ժամանակ յոյս յայտնել մարդկանց որ կատարուելու էր այդ:

Եւ յիրաւի, Շահը ինքը—չգիտեմ լուրջ էր թէ սխալմամբ—ինձ փոփարէն միրզա կոչելու, խան էր կոչել, բայց ինչպէս ասել եմ, մեծ վէզիրն իմ բարեկամը չէր և հետեապէս խուլ ականջ էր դարձնում նրանց՝ որոնք արքունիքում առում էին թէ Հաջի Բաբան արժանի է խան դառնալու: Նա մտածում էր որ, եթէ խանութիւնը ինձ տրուէր՝ էլ ի՞նչ կը մնար դեսպանի համար, որն իր խնամին էր. որովհետեւ երբ նա վե-

բաղաճնար՝ նրան էլ մի տիտղոս պիտի տրուէր: Բացի դրանից՝ նա ի՞նչպէս էր կարող իր ձեռքով յառաջագիժութիւն տալ մէկին՝ որն իր ամենաոխերիմ թշնամու—իր նախորդի սիրելին էր եղել:

Այնուամենայնիւ ես չէի յուսահատուում. ես ապրում էի յուսով ու մխիթարւում էի այն փողով, որ Թէհրանից գնալիս՝ Թաղել էի գետնի տակ և որը վերադարձիս գտայ ինչպէս թողել էի:

Ես անց եմ կացնում օրերս հայրենակիցներին համար պատմելով արկածներս և զարմացնելով նրանց: Ես վայելում եմ Շահի առջև կանգնելու շնորհը և ի՞նչ գիտէ, գուցէ ժամանակը, պատեհութիւնը և լեզուս մի օր կ'օգնեն ինձ և կ'իրագործուին իմ մեծ փափագները և փառասիրութիւնս յազուրդ կըստանայ:

Եւ այժմ, ազնիւ ընթերցող, Հաջի Բաբան համբուրելով ձեր ոտքերը, և փարելով ձեր փէշերին՝ պաշտպանութիւն է հայցում, և յոյս ունի որ ձեր ստուերն երբէք չի պակասիլ իր վրայից:

Վ Ե Ր Ջ
